

Թեմայի վերնագիրը՝

Հեռահաղորդող էլեկտրակարգիտգրաֆների
ներդրումը Հայաստանում

Կազմակերպության անվանումը՝

ՀՀ ԳԱԱ «Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի
ինստիտուտ» ՊՈԱԿ

Թեմայի ղեկավարը՝

Սարգսյան Ռաֆիկ Շավարշի

Առաջարկվող ծրագրի գլխավոր նպատակը հանդիսանում է 3 մուտքային Հոլտեր տիպի կարդիոգրաֆի առևտրային նախատիպի նախագծումը և մշակումը՝ ունակ 48 ժամվա ընթացքում անցկացնել մարդու կարդիոգրամայի գրանցում՝ ազատ գործունեության պայմաններում: Մշակվող նախատիպում նախատեսվում է գրանցված տվյալների փոխանցումը բժշկին հեռահաղորդակցական կապի միջոցով: Ծրագրի մասնակիցների կողմից արդեն մշակվել էին տարբեր ժամանակից կենսաբժշկական սարքավորումներ, այդ թվում՝ 12-մուտքային մասնագիտացված կարդիոգրաֆներ, և կարելի է հուսալ, որ մշակվող կարդիոգրաֆները չեն զիջի իրենց տեխնիկական ցուցանիշներով արտասահմանյան անալոգներին, իսկ արժեքը՝ 2 անգամ ավելի ցածր կլինի արտերկրյա նմանատիպ սարքերից:

Առաջարկվող ծրագրի մյուս նպատակն է հանդիսանում օրգանիզմի կարդիոգրամայի ամպլիտուդա-ժամանակային պարամետրերի վրա՝ մի շարք ախտաբանական վիճակների ազդեցության առանձնահատկությունների բացահայտման հետ կապված գիտական հետազոտությունների անցկացումը: Այսպիսի հետազոտությունների արդյունքները կարող են հանգեցնել կարևոր ախտորոշիչ կարդիոլոգիական չափանիշների բացահայտմանը, որոնք կօգտագործվեն մարդկանց տարբեր հիվանդությունների վաղ բացահայտմանը: